«գրական չարժումը սերտ եւ անմիջական կապ պիտի պահէ կուսակցութեան եւ խորհրդային իշխանութեան քաղաքականութեան օրւայ գործօն խնդիրների հետ, գրողները պէտք է մտցուին սոցիալիստական շինարարութեան գործնական աշխատանքների մէջ»: Ուրիշ խօսքով, գրական ազատ ստեղծագործութիւնը ենթարկուելու է կոմունիստ. կուսակցութեան խիստ հակակշռի ու ղեկավարութեան եւ գրողը դառնալու է կուսակցական եւ կառավարական պաշտօնեայ: Նրանից պահանջուելու է լինել հլու կամակատար իշխանութեան եւ անտրրտունջ կատարել վերից եկող բոլոր հրամանները: Ձենթարկուողների համար սահմանւում է յատուկ պատիժ՝ արտաքսում միութիւնից. «Խորհրդ. Գրողների Միութեան անդամակցութիւնից հեռացնելը կատարւում է վարչութեան քարտուղարութեան վճռով»: Միութիւնից կարտաքսւի եւ նա, ով մի տարւայ ընթացքում գրական «պրոդուկցիա» չտայ, այսինքն՝ որեւէ երկ չարտադրէ:

Ինչպէս ասացինք, այս օրէնքը պարտաւորեցուցիչ է եւ Հայաստանի համար: Հայ մշակոյթը եւ, ի մասնաւորի գրականութիւնը, սրանով ենթարկւում են մի նոր եւ շատ ծանր փորձութեան:



Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ ԱՆՅԱՅՏ ՈՏԱՆԱՒՈՐԸ

Երեւանի «Գրական Թերթ»-ը (20 վեր.), Թիֆլիսի 1911 թ. «Մամուլ» օրաթերթի № 6-ից առնելով, հրատարակել է Ղազարոս Աղայեանի մինչեւ այժմ անյայտ մնացած հետեւեալ ոտանաւորը-

ԳԼՈ՞ՒԽ ԹԷ ԳԼԽԱՐԿ

(ՆԻՔՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ)

Երբ որ ընտրութեան լինէք ձեռնամուխ,
Դուք գլխարկ կընտրէք եւ ոչ թէ գլուխ,
Ի՞նչ է վեղարը, եթէ ոչ գլխարկ,
Որ պարփակում է մի գլուխ դատարկ:
Կուզէք ընտրեցէք մի աշխարհական,
Թող լինի անգամ մի մեծ գիտնական,
Բայց 'չէ՞ որ նա էլ վեղար պիտ կրի,
Եւ ինչ որ սեւ է, նրան համակրի:
Ուրեմն, էլ ի՞նչ հարկ մտմտալ ի զուր,
Թէ վեղարներից որն է բուրկամ սուր:

Ինչպէս յայտնի է, Մակար կաթուղիկոսի մահից յետոյ, Ղ. Աղայեանը թունդ կողմնակից էր Խրիմեանի ընտրութեան: Այդ առթիւ էր, որ գրեց Խրիմեանի նուիրուած յայտնի ոտանաւորը՝ «Թո՛ղ բարձրացնեն ճոխնչ-աղաղակ»: Կաթուղիկոս ընտրելուց յետոյ, Խրիմեանը ծանր յուսախաբութիւն պատճառեց իր պաշտողներին: Ամենէն շուտ եւ հիմնովին հիասթափուողներից մէկը եղաւ Աղայեանը, որ անձնական կաշու վրա էլ ճաշակեց կաթուղիկոսի բացասական վերաբերումի հետեւանքները: Անշուշտ, այս ոտանաւորը՝ գրուած նոր կաթուղիկոսի ընտրութեան առթիւ արտայայտում էր տպաւորութիւնները այդ հիասթափութեան: